

Մեծարգո պարոն/տիկին/-----

Ինչպես տեղեկացրել ենք, 2008թ. սեպտեմբերի 17-22-ը «Մեկ ազգ, մեկ մշակույթ» համահայկական փառատոնի շրջանակում անցկացվելու է սփյուռքահայ լրատվամիջոցների համաժողով «Աշխարհի հետ՝ մեր ինքնությամբ» թեմայով:

Նախատեսվում են «Հայրենիք-Սփյուռք, սփյուռք-սփյուռք համագործակցություն. արդյունքներ և կոնկրետ անելիքներ», «Հին և նոր սփյուռքի հիմնախնդիրներ», «Հայրենիք-սփյուռք համագործակցության շարունակության հարցերը», «Հայաստանը համայն հայության հոգևոր հայրենիքն է, ազգային արժեքների միակ և հուսալի հանգրվանը» և այլ թեմաներով զեկուցումներ:

Ակնկալում ենք, որ Դուք համաժողովում հանդես կգաք Ձեզ հուզող հարցերով: Հետագա հրապարակումը դյուրացնելու համար ցանկալի կլինեն, որ Ձեր ելույթը լինեն գրավոր:

Միրով սպասում ենք Ձեր առաջարկներին: Հայտնում ենք, որ ճանապարհածախսը հոգում եք Դուք, Հայաստանում գտնվելու բոլոր ծախսերը /կեցություն, սնունդ, փոխադրամիջոց/ հոգում է Ժուռնալիստների միությունը:

Խնդրում ենք օգոստոս ամսվա ընթացքում տեղեկացնել Ձեր մասնակցության, զեկուցման թեմայի մասին հետևյալ հասցեով.
Էլ. փոստ՝ inter@mincult.am և Երևան, 0010, Պուշկինի Յա, Հայաստանի Ժուռնալիստների միություն, ՀԺՄ նախագահ Ատոկ Գևորգյանին: